

## Մամլոյ Հաղորդագրութիւն՝ Իսլամական Պետութիւն Կազմակերպութեան Կատարած Ոճրագործական Գործողութիւններուն Վերաբերեալ:

Սուրիոյ հիւսիսին մէջ շրջաններ, յատկապէս Արաբունար (Գոբանի) քաղաքը և իր արուարձանները, վերջին ժամանակներուն կ'ենթարկուին վայրագ յարձակումներու ահաբեկչական "Իսլամական Պետութիւն" կազմակերպութեան կողմէ (նախկին SUՀԷՇ): Կազմակերպութեան ուժերը իրենց վերհսկողութեան տակ առնելէ ետք Իրաքէն ընդարձակ տարածքներ և տիրելէն ետք զանազան զենքերու Իրաքեան բանակէն, սկսաւ ընդլայնել իր վերհսկողութեան տակ հողերուն տարածքը Սուրիոյ մէջ, սկսաւ Իրաքի Սուրիոյ սահմանային շրջաններէն Ապու Քամալ քաղաքին մէջ, անցնելով Տէր Ջոր քաղաքէն և իր արուարձաններէն, հասնելով Սուրիոյ հիւսիսը Թաքական-Սուրիական սահմանները, նպատակ ունենալով միացնել իրարու Սուրիոյ և Իրաքի մէջ իր վերհսկողութեան տակ գտնուող շրջանները: Այս կազմակերպութիւնը, իր վերջին գործողութիւններուն ընթացքին, կատարեց ամենասարսափելի ոճրագործութիւնները՝ տեղահանելով բնակչութիւնը, այրելով ու կործանելով տուները, հրապարակային մահապատիժի ենթարկելով քաղաքային բնակչութիւնը և յօշել անոնց դիակները: Ազգային Համակարգող Մարմինը կը դատապարտէ ամենաուժեղ առումով "Իսլամական Պետութիւն" կազմակերպութեան կատարած վայրագ ոճրագործական գործողութիւնները Սուրիացի քաղաքացիներուն հանդէպ, կոչ ուղղելով բոլոր Սուրիացիներուն կանգնիլ միասին դիմակալելու այս ահաբեկչական կազմակերպութիւնը, որ կը ներկայացնէ վտանգ Սուրիոյ միասնականութեան և անոր ապագային վրայ: Միեւնոյն ժամանակ, Համակարգող Մարմինը կը դատապարտէ Սուրիոյ վարչակարգին ձախողութիւնը պատերազմելու այս ահաբեկչական կազմակերպութեան իր գտնուած բոլոր վայրերուն մէջ, որ կը պնդէ թէ ան կը պատերազմի ահաբեկչութեան դէմ: նաև, Ազգային Համակարգող Մարմինը կը պահանջէ ՄԱԿ շարժելու անմիջապէս և լրջօրէն պատերազմելու այս կազմակերպութեան և բոլոր ահաբեկչական ուժերուն դէմ Սուրիոյ մէջ, և պատժել աջակից ուժերը այս ահաբեկչական խմբաւորումներուն, որոնք սպառնալիք են Սուրիոյ, տարածաշրջանին և աշխարհին:

10/07/2014, Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուական գրասենեակ